ՄՇԱԿՈՒՅԹ

# ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ «ԸՆՁԵՆԱՎՈՐԸ» ԵՎ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ



*Վրաստանի գրողների տանը, աշխարհահռչակ գիտնականներ Օրբելի եղբայրների՝ Հայաստանի Ծաղկաձորի տուն-թանգարանը, Շոթա Ռուսթավելու 850-ամյա հոբելյանական միջոցառումների շրջանակներում, ցուցադրեց իրենց մոտ պահվող Շոթա Ռուսթավելու վերաբերյալ արժեքավոր ցուցանմուշներ:*

Միջոցառումն իրականացվել էր Վրաստանի գրողների միության նախագահի հրավերով եւ Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ:

Հանդիպումը բացեց Վրաստանի գրողների միության համանախագահի Մաղվալա Գոնաշվիլին: Ապա Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրեն Մարինե Բունիաթյանը հանգամանալից խոսեց Օրբելի գիտնականների կյանքի ու գործունեության, ծնողների հետ ունեցած նամակագրական կապերի մասին, որոնցում առանձնակիորեն է դրսեւորվում այն մեծ սերն ու կարոտը, որ տածում էին եղբայրները հարազատ ծննդավայր Թբիլիսիի նկատմամբ:

Թանգարանի գիտաշխատող Գերասիմ Մկրտչյանը իր «Ռուսթավելու դարաշրջանը» զեկույցում փաստեց այն իրողությունը, որ 1936թ. , Լենինգրադում, Ռուսթավելու 750-ամյակի առիթով Հովսեփ Օրբելին փայլուն ելույթ է ունեցել եւ հրատարակել Ռուսթավելու «Վագրենավորը»: «Կարող ենք համարձակ ասել, որ թեկուզ հենց վրաց ռուսթավելագետների շարքում, նա լավագույններից մեկն էր: Նրա զեկուցումները ե՛ւ Մոսկվայում, ե՛ւ Լենինգրադում սպասված են եղել, եւ ըստ նրա աշակերտ, հանրահայտ գիտնական Իոսեբ Մեգրելիձեի՝ ոչ մեկն այդքան հպարտությամբ ու ջանասիրությամբ չէր զեկուցում Ռուսթավելու «Վագրենավորի» մասին, որքան Օրբելին»,- հավելեց Գ.Մկրտչյանը:

Իրենց ելույթներում, Վրաստանի գրողների միության համանախագահ Ռեւազ Միշվելաձեն, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության՝ Թբիլիսիի Իսանիի շրջանի պատգամավորության մեծամասնական թեկնածու Դավիթ Ճիճինաձեն, ՎԳՄ հայկական մասնաճյուղի նախագահ Անահիտ Բոստանջյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, անվանի գրող, թարգմանիչ Գիվի Շահնազարը արժեւորեցին Ռուսթավելու տեղն ու դերը համաշխարհային մշակույթի ժառանգության մեջ եւ կարեւորեցին ցուցահանդեսը՝ որպես հայ-վրաց դարավոր մշակութային համագործակցության եւս մեկ դրսեւորում:

Անդրադառնալով Օրբելի եղբայրների թանգարանի ստեղծման պատմությանը՝ ընթերցողին հիշեցնենք, որ 1972 թվականից Ծաղկաձոր քաղաքում գործում է աշխարհահռչակ գիտնականներ Ռուբեն (1880-1943), Լեւոն (1882-1958) եւ Հովսեփ (1887-1961) Օրբելի եղբայրների հիշատակը հավերժացնող տուն-թանգարանը: Դա այն տունն է, որտեղ ծնվել է ակադեմիկոս Լեւոն Օրբելին: Եղբայրներից ավագը՝ Ռուբենը, համարվում է ստորջրյա հնագիտության հիմնադիրը եւ ստորջրյա տեխնիկայի նշանավոր կոնստրուկտոր:



Լեւոն Օրբելին 20-րդ դարի համաշխարհային աշխարհահռչակ ֆիզիոլոգներից մեկն է:

Իսկ Հովսեփը ղեկավարել է Լենինգրադի պետական Էրմիտաժը, 1943թ. հիմնել է Հայաստանի Գիտությունների ակադեմիան եւ եղել է ակադեմիայի առաջին պրեզիդենտը:

Մինչեւ Պետերբուրգ մեկնելը, եղբայրներն իրենց ծնողների հետ ապրել են Թիֆլիսում, Բեհբութովսկի փողոցի վերջում (նախ՝ Էնգելսի, իսկ այժմ՝ Ասաթիանու փողոց), որտեղ կա հուշատախտակ՝ «Այս տանն ապրել են Օրբելի եղբայրները» գրությամբ: Վրաստանի մայրաքաղաք Մետրոշինի թաղամասում կա Օրբելի եղբայրների անունը կրող փողոց:

Տուն-թանգարանի հիմնական ցուցադրությունը բաղկացած է երկու մասից՝ գիտական եւ հուշային: Գիտականը ընդգրկում է Օրբելիների անցած ուղին ու գործունեությունը, իսկ հուշայինում ներկայացված են նրանց սենյակները՝ անձնական իրերով ու կահույքով: Թանգարանն ունի 2000-ի հասնող մշակութային նմուշներ, որոնք բերվել են Սանկտ Պետերբուրգից, դրանց 80 տոկոսը, Ռուբեն Օրբելու մահից հետո, ըստ նրա կտակի, թանգարանին է նվիրել նրա դուստր Ռուսուդան Օրբելին:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***
***Վրաստանի ԿԳ նախարարության փորձագետ***

ԳՈՒՍԱՆ ՀԱՎԱՍԻ - 120

# ԵՎ ԱՅԱԶՄԱՅՈՒՄ ԻՐ ՄԵԾՆ ԶԱՎԱԿԻ ՀՈԳԵՀՄԱ ԵՐԳԸ ՏԱՐԱԾՎԵՑ...

*Սեպտեմբերի 25-ին, Ծալկայի շրջանի Այազմա գյուղում, կայացավ աշուղական երգի տոն, որը ավանդական է եւ նվիրված տեղի ծնունդ, աշուղական երգի անմահ վարպետ Գուսան Հավասու (Արմենակ Պարսամի Մարկոսյան) մեծարմանը:*

25-ամյա ավանդույթ ունեցող այս տոնը վաղուց արդեն դարձել է տարածաշրջանային մասշտաբի տոնահանդես, որին իրենց մասնակցություն են բերում նահանգային եւ շրջանային բարձր պաշտոնյաներ, հյուրեր՝ Թբիլիսիից եւ Երեւանից, Վրաստանի եւ Հայաստանի տարբեր շրջաններից:

Տոնն այս տարի այլ հնչողություն ուներ, քանզի հոբելյանական էր ու նվիրված Խորհրդային Հայաստանի ժողովրդական արտիստ Գուսան Հավասու ծննդյան 120-ամյակին:



Բացելով տոնահանդեսը՝ Ծալկայի շրջանային վարչության առողջապահության ապահովման, մշակույթի, սպորտի, կրթության եւ երիտասարդության ծառայության ղեկավար Յուրի Խեչոյանը, արժեւորեց Գուսան Հավասու երգարվեստը, որը հագեցած է լեռնաշխարհի բնության վեհությամբ, նազանքով եւ յայլա գնացող կանանց ու աղջիկների գեղեցկությամբ, դաշտերում եւ լեռներում ջանասիրաբար աշխատող մարդկանց նվիրվածությամբ:

Օզնիի հանրային դպրոցի տնօրեն Ռազմիկ Հանեսյանը, խոսելով գուսանական արվեստի զարգացման ուղում, ներկայացրեց Հավասու կենսագրությունն ու գործունեությունը:

Պատգամավորության թեկնածուներ Հենզել Մկոյանը, Կախաբեր Օքրիաշվիլին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Ծալկայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Ջոնի (Իլիա) Լաբաձեն, Գուսան Հավասու քրոջ թոռը՝ 73-ամյա, այազմացի Վանիկ Ծառուկյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, Ծալկայի շրջանի հայկական համայնքների նորանշանակ հոգեւոր հովիվ արժանապատիվ Տեր Ղեւոնդ քահանա Թոփաշյանը, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի պետական լիազոր Պաատա Խիզանիշվիլին կարեւորեցին Հավասու տոնի ավանդական լինելը, որը նաեւ խորացնում է բարեկամությունը տարբեր ազգերի միջեւ՝ ի մասնավորի դարերից եկող հայ-վրացական բարեկամությունը, նպաստում տարբեր մշակույթների մերձեցմանը:

Տոնահանդիսությանը ներկա էին Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Իրակլի Գիգինեիշվիլին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Գագիկ Կարսլյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, «Համաշխարհային հայկական կոնգրեսի» անդամ Ռաֆիկ Աղաջանյանը, Գուսան Հավասու թոռ Պարսամ Մարկոսյանը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, պաշտոնական այլ անձինք:

Հոբելյանական տոնահանդեսի գեղարվեստական մասը կազմակերպել էր Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը: Հավասու 120-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելու համար հատուկ Երեւանից ժամանել էր Ջիվանու անվան աշուղական դպրոցի «Հավասի» համույթը, գեղարվեստական ղեկավար Հայաստանի ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսյանի գլխավորությամբ, ինչը առանձնահատուկ շքեղություն հաղորդեց տոնահանդեսին:

Եվ Այազմայում իր մեծն զավակի՝ Հավասու հոգեհմա երգը տարածվեց: Միմյանց հաջորդեցին գեղարվեստական համարները: Դաշտահանդեսը բացեց Նարդեւան գյուղի «Լուսաղբյուր» պարի համույթը, այնուհետեւ ելույթ ունեցան Ղզլքիլիսա գյուղի «Կարմրավանք», Ջինիսի գյուղի վրացական ազգագրական երգի, Օզնի գյուղի պարային, «Հայարտուն» կենտրոնի «Տարոն» համույթները: Նինոծմինդայից ժամանած Հայաստան Իսպիրյանի, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնից՝ Նինա Կարապետյանի, Հենրիխ Պետրոսյանի կատարմամբ հնչեցին գուսան Հավասու մեղմածոր երգերը:

***ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ***

ԿՐԹԱԿԱՆ

# 2017 ԹՎԱԿԱՆԻՑ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԿՓՈԽՎԵՆ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, հաջորդ ուսումնական տարվանից 1-6-րդ դասարանների աշակերտների համար կտպագրվեն բացարձակապես նոր դասագրքեր:*



Նրա խոսքով, կփոխվի նաեւ դասագրքի բովանդակությունը: Ինչ վերաբերում է բարձր դասարանների դասագրքերին, ապա, ինչպես հայտարարեց նախարարը, դրանք կնորացվեն, սակայն բովանդակությունը չի փոխվի: Միաժամանակ, Ալեքսանդր Ջեջելավան նշեց, որ հաջորդ տարի գերատեսչությունը գրքերը գնելու է հրատարակչություններից:

Կրթության նախարարը խոսեց նաեւ էլեկտրոնային դասագրքերի ներդրման հնարավորության մասին: Նրա խոսքով, այն, ամենայն հավանականությամբ, կներդրվի որպես դասագրքի այլընտրանք: Նախարարը գտնում է, որ առաջիկա 2-3 տարում 500 հազար աշակերտներից 50 հազարը կընտրեն էլեկտրոնային դասագրքերը, որից հետո, այդ նորամուծությունը կներդրվի համակարգում: Նախարարի հավաստմամբ, մի շարք հրատարակչություններ պատրաստակամություն են հայտնել՝ ներդրումներ իրականացնելու էլեկտրոնային համակարգի զարգացման համար:

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

*Նոր ուսումնական տարում Վրաստանի 400 դպրոցներում, ավանդական դասամատյանների հետ միասին, կօգտագործվեն նաեւ էլեկտրոնային մատյաններ, որտեղ ուսուցիչները կկարողանան գրանցել դասերի հաճախելիության, գնահատականների եւ քննությունների տվյալները:*

Էլեկտրոնային մատյանների օգնությամբ, դպրոցի տնօրինությունը, մանկավարժները, ինչպես նաեւ ծնողները կկարողանան ցանկացած ժամանակ մանրամասն տեղեկատվություն ստանալ երեխայի ակադեմիական առաջադիմության ու տնային առաջադրանքների մասին:

Այն դպրոցների մանկավարժները, որտեղ ներդրվում են էլեկտրոնային մատյանները, արդեն անցել են համապատասխան վարժանքներ: Կրթության նախարարությունը կվերահսկի էլեկտրոնային մատյաններով ուսուցիչների աշխատանքը, որպեսզի բացահայտի նորամուծության դրական ու բացասական կողմերը, իսկ հիմնախնդիրների ծագման դեպքում՝ իրականացնի անմիջական արձագանքում: Սկզբնական փուլում, էլեկտրոնային մատյանները ներդրվում են այն դպրոցներում, որոնք կամավոր ցանկություն են հայտնել՝ մասնակցելու այդ պիլոտային նախագծին:

# საქართველოს პარლამენტის 2016 წლის 8 ოქტომბრის არჩევნები

## Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրություններ

## ამომრჩეველთა საყურადღებოდ!/Ո՛ւշադրություն ընտրողների

### კენჭისყრა იმართება 08.00 საათიდან 20.00 საათამდე
### Քվեարկությունն անց է կացվում ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ը



კენჭისყრის შენობაში შესვლისას ნაკადის მომწესრიგებელ კომისიის წევრს წარუდგინეთ პირადობის მოწმობა ან საქართველოს მოქალაქის პასპორტი (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) და გაიარეთ მასთან მარკირების შემოწმების პროცედურა

Քվեարկության շենք մտնելիս՝ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը (Վրաստանի բռնազավթված տարածքից հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայականը) և նրա մոտ անցե՛ք նշմարման ստուգման ընթացակարգ

***თუ აღმოჩნდა, რომ გაქვთ მარკირება, არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება***
***Եթե պարզվի, որ ունեք նշմարում, ձեզ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք***



მარკირების შემოწმების პროცედურის გავლის შემდეგ მიდით სარეგისტრაციო მაგიდასთან და რეგისტრატორს წარუდგინეთ პირადობის მოწმობა ან საქართველოს მოქალაქის პასპორტი (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა

გაიკეთეთ მარკირება

Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո, գնացե՛ք գրանցման սեղանի մոտ և ընտրողների գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայականը)

Անցե՛ք նշմարում

***მარკირებაზე უარის თქმის შემთხვევაში არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება***
***Նշմարման ընթացակարգն անցնելուց հրաժարվելու դեպքում՝ ձեզ թույլ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք***



ამომრჩეველთა სიაში თქვენი გვარის გასწვრივ გააკეთეთ ხელმოწერა

Ընտրողների ցուցակում ստորագրե՛ք Ձեր ազգանվան երկայնքով

მიიღეთ რეგისტრატორისგან ბეჭდითა და ხელმოწერით დამოწმებული საარჩევნო ბიულეტენები

Ընտրողների գրանցում իրականացնողից ստացե՛ք կնիքով և ստորագրությամբ վավերացված ընտրական քվեաթերթիկները

კენჭისყრის კაბინაში შემოხაზეთ თქვენთვის სასურველი ერთი საარჩევნო სუბიექტის რიგითი ნომერი

Քվեախցիկում շրջագծե՛ք Ձեզ համար ցանկալի մեկ ընտրական սուբյեկտի հերթական համարը



თუ დამოუკიდებლად არ შეგიძლიათ შეავსოთ საარჩევნო ბიულეტენი, უფლება გაქვთ, კენჭისყრის კაბინაში დასახმარებლად მოიწვიოთ ნებისმიერი პირი, გარდა საარჩევნო კომისიის წევრისა, კანდიდატისა, საარჩევნო სუბიექტის წარმომადგენლისა, პრესისა და მასობრივი ინფორმაციის სხვა საშუალების წარმომადგენლისა და დამკვირვებლისა

Եթե ինքուրույն չեք կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք օգնելու համար քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի կամ դիտորդի

***თუ გაგიფუჭდათ საარჩევნო ბიულეტენი, მიმართეთ საარჩევნო კომისიის თავმჯდომარეს, გადაეცით გაფუჭებული და მოითხოვეთ ახალი საარჩევნო ბიულეტენი***
***Եթե վնասել եք քվեաթերթիկը, դիմե՛ք ընտրական հանձնաժողովի նախագահին, փոխանցե՛ք վնասվածը և պահանջե՛ք նոր ընտրական քվեաթերթիկ***



კენჭისყრის კაბინიდან გამოსვლის შემდეგ აიღეთ სპეციალური კონვერტი და დაკეცილი საარჩევნო ბიულეტენები მოათავსეთ მასში

Քվեախցիկից դուրս գալուց հետո վերցրե՛ք հատուկ ծրարը և ծալված ընտրական քվեաթերթիկները զետեղե՛ք դրա մեջ

სპეციალური კონვერტი მოათავსეთ საარჩევნო ყუთში

Հատուկ ծրարը գցե՛ք քվեատուփի մեջ

***კენჭისყრაში მონაწილეობის შემდეგ, გთხოვთ, დატოვოთ საარჩევნო უბანი***
***Քվեարկությանը մասնակցելուց հետո հեռացե՛ք ընտրական տեղամասից***

ცესკოს სატელეფონო/საინფორმაციო ცენტრი - 2510051/ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոն - 2510051

Ժողովրդավարության ծառայություն

დემოკრატიის სერვისი

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագրեր է ստորագրել նախարարներ նշանակելու մասին:*

Նախագահի հրամանագրով, Հայաստանի մշակույթի նախարար է նշանակվել **Արմեն Ամիրյանը**, էկոնոմիկայի նախարար՝ **Սուրեն Կարայանը**, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար՝ **Արտեմ Ասատրյանը**, առողջապահության նախարար՝ **Լեւոն Ալթունյանը**, բնապահպանության նախարար՝ **Արծվիկ Մինասյանը**, արտակարգ իրավիճակների նախարար՝ **Արմեն Երիցյանը**, արդարադատության նախարար՝ **Արփինե Հովհաննիսյանը**, սփյուռքի նախարար՝ **Հրանուշ Հակոբյանը**, տարածքային կառավարման եւ զարգացման նախարար՝ **Դավիթ Լոքյանը**, կրթության եւ գիտության նախարար՝ **Լեւոն Մկրտչյանը**, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար՝ **Հրաչյա Ռոստոմյանը**:

## ՀԱՍՏԱՏՎԵՑ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

*Հայաստանի կառավարությունը հաստատեց 2017 թվականի պետական բյուջեի նախագիծը, որով եկամուտները նախատեսվում են 1 տրիլիոն 135 միլիարդ դրամ, ծախսերը՝ 1 տրիլիոն 360 միլիարդ, դեֆիցիտը՝ 150,1 միլիարդ դրամ՝ 2,8 տոկոս: Նախագծով նախատեսվում է նաեւ ՀՆԱ-ի 3,2 տոկոս աճ:*

«Մենք 2017 թվականին բավականին կոշտ բյուջե ենք նախատեսում, թվերը խոսում են դրա մասին: Նախատեսում ենք մոտավորապես 70 եւ ավելի միլիարդ դրամի եկամուտների աճ, մոտ 100 միլիարդ դրամի էլ ծախսերի նվազեցում: Այն բոլոր հարցադրումները, որոնք հնչեցնում ենք՝ կառավարման, ծախսերի նվազեցման վերաբերյալ, այդ բոլոր խնդիրները շատ ու շատ ակտուալ են»,- ասաց Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը:

Ֆինանսների նախարար Վարդան Արամյանն էլ նշեց, որ ամենակարեւոր սկզբունքը, որն ամրագրվել է հաջորդ տարվա բյուջեով, հարկաբյուջետային եւ պարտքի կայունությունն է: Ըստ նախարարի, 2014-2015 թվականներին եղել է պետական պակասուրդի բավական բարձր մակարդակ՝ 4,8 տոկոս: Եվ այս տարվա արդյունքներով, ամենայն հավանականությամբ, կլինի 5,9 տոկոսանոց պակասուրդ: Սրա հետեւանքով, ավելացել է արտաքին պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը: «Սա պարտքի ստեղծման հիմնական աղբյուրն է: Մեզ մոտ պարտքը երկու տարիների ընթացքում՝ 2014-2015 թթ., 43,7 տոկոսից բարձրացել է եւ այս տարեվերջին կկազմի 54,4 տոկոս: Բնականաբար, հաջորդ տարիներին պետք է լինենք պահպանողական, որպեսզի թույլ չտանք պարտքի գերաճ»,- ասաց ֆինանսների նախարարը:

## ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ



*Սեպտեմբերի 27-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) պատվիրակությանը՝ Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ, Հայ օգնության ֆոնդի նախագահ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի գլխավորությամբ:*

Հայաստանի Նախագահը բարձր գնահատեց տարիներ ի վեր՝ սկսած 1988թ.-ից, ՀՕՖ-ի հայրենանվեր գործունեությունը ինչպես աղետի գոտում, այնպես էլ՝ Հայաստանի բազմաթիվ այլ բնակավայրերում ու Արցախում:

Հայաստանի Նախագահն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց ՀՕՖ-ի նախագահ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին եւ վստահություն հայտնեց, որ սրբազանի իմաստնությունն ու կազմակերպչական տաղանդը դեռ երկար տարիներ կծառայեն հայ ժողովրդին:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարերարներ Էդվարդ եւ Ժանեթ Մարդիգյաններին հանձնեց Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ եւ հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում ներդրած նշանակալի ավանդի համար օրերս նրանց շնորհված պետական բարձր պարգեւները՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալները:

Սերժ Սարգսյանը պատասխանեց հանդիպման մասնակիցներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերել են Հայաստանի զարգացման հեռանկարին, տնտեսական առաջնահերթություններին, ներդրումների ներգրավման եւ արտահանման խթանման ուղղությամբ պետական քաղաքականությանը, սիրիահայերի աջակցության ծրագրերին ու մի շարք այլ թեմաների:

## «ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈ-2016» ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Սեպտեմբերի 30-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը այցելեց «Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ընկերության «Երեւան էքսպո» ցուցահանդեսային համալիրում «Դիջիթեք էքսպո-2016» 12-րդ ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդես:*



Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը, «Տոն տեխնոլոգիական հայության համար» կարգախոսի ներքո, անցկացվող ցուցահանդեսի հիմնական նպատակն է ստեղծել տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների, սպառողների ու հասարակության միջեւ հաղորդակցման բարենպաստ միջավայր, ինչպես նաեւ ծանոթացնել հայաստանյան տեղեկատվական եւ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների դաշտի իրական պատկերին, ձեռքբերումներին ու հեռանկարներին:

«Երեւան էքսպո»-ի առանձին սրահում ցուցահանդեսի կազմակերպիչները եւ ոլորտի պատասխանատուները Սերժ Սարգսյանին ներկայացրեցին ռազմարդյունաբերության մեջ կիրառվող նորարարական տեխնոլոգիաների ներդրման ընթացքը, զեկուցել Հայաստանի նախագահի հանձնարարությամբ ձեւավորված ռազմարդյունաբերական համալիր-տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններ ձեւաչափով համագործակցության այս փուլի արդյունքներն ու առաջիկա ծրագրերը:

## «ԵԿԵՔ ԱՇԽԱՐՀԻՆ ԱՍԵՆՔ, ԹԵ ԻՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ»



*«Ես միշտ եղել եմ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման կողմնակիցը»:*

Նման հայտարարությամբ, հայ-իսրայելական համագործակցության հասարակական ֆորումի ընթացքում, հանդես եկավ Իսրայելի Կնեսետի փոխխոսնակ, Իսրայել-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար Թալի Պլոսկովը:

«Ես ուժերիս սահմաններում շարունակելու եմ Կնեսետում բարձրացնել այս հարցը: Ցանկանում եմ նշել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման կողմնակիցների թիվը Կնեսետում պարբերաբար աճում է: Ամենամեծ ձեռքբերումը այս հարցում Կրթության հանձնաժողովի կողմից պաշտոնապես այդ փաստը ճանաչելն էր: Այո, սա Իսրայելի պաշտոնական դիրքորոշումը չէ, սակայն սա արդեն առաջխաղացում է այս հարցում եւ, իմ կարծիքով, շատ նշանակալի»,- ընդգծեց Կնեսետի փոխխոսնակը:

Նա նշեց, որ Իսրայելում Հայաստանի պատմության, ցեղասպանության մասին քչերը գիտեն, եւ այդ բացը լրացնելու համար պետք է զգալի աշխատանք տանել:

- Մենք պետք է միասին աշխատենք, քանի որ երկրները, որոնք շահագրգիռ չեն ցեղասպանության ճանաչման հարցում, անում են ամեն ինչ, որպեսզի այդ մասին չիմանան: Եկե'ք աշխարհին ասենք, թե ինչ է պատահել 1915 թվականին: Եկե'ք ասենք ճշմարտությունը,- ասաց Թալի Պլոսկովը:

### ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ, ԸՆԴՈՒՆՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

***Սեպտեմբերի 26-ին Հայաստանի Ազգային ժողովը, առաջին ընթերցմամբ, ընդունեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը: Կողմ քվեարկեց 77, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 9 պատգամավոր:***

***Օրինանախագիծը սեպտեմբերի 26-ին, Աժ-ում տեղի ունեցած նիստում, ներկայացրեց Հայաստանի արդարադատության նախարարի պաշտոնակատար Արփինե Հովհաննիսյանը: Ըստ օրինանախագծի, առաջարկվում է Էկոնոմիկայի նախարարությունը վերանվանել Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարություն, Տրանսպորտի եւ կապի նախարարությունը՝ Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը՝ Էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություն եւ հանել Քաղաքաշինության նախարարությունը:***

### «ԱՐՏԱԴՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

***Երեւանում պաշտոնապես բացվեց «Արտադրված է Հայաստանում» (Made in Armenia) հայկական արտադրանքի ու ծառայությունների ցուցահանդեսը: Բացման արարողությանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, նախարարներ, բիզնես ոլորտի ներկայացուցիչներ:***

***«Արտադրված է Հայաստանում-2016»-ի հիմնական նպատակը Հայաստանի արդյունաբերության առկա ներուժի, զարգացման հնարավորությունների ցուցադրելն է եւ նոր շուկաների բացահայտմանը նպաստելը:***

### ԱՃԵԼ ԵՆ ԽՈՇՈՐ ԲԻԶՆԵՍԻՑ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԸ

***Խոշոր բիզնեսից գանձված հարկային եկամուտները մոտ 7%-ով գերազանցել են 2015թ. ութ ամիսների ցուցանիշը: Չնայած աշխարհաքաղաքական-տնտեսական անբարենպաստ պայմաններին, ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունը 2016թ. հունվար-օգոստոս ամիսներին գրանցել է գրեթե 293 մլրդ դրամ հարկային եկամուտ՝ ի տարբերություն 2015թ. նույն ժամանակահատվածում արձանագրված մոտ 275 մլրդ դրամի: Եվ սա այն պայմաններում, երբ երկրի խոշորագույն հարկ վճարողներից առաջին 4-ի հարկային եկամուտները նվազել են ավելի քան 15 մլրդ դրամով. մասնավորապես, «Զանգեզուրի ՊՄԿ»՝ 11,4 մլրդ դրամ, «Արմենիա Տելեֆոն Կոմպանի»՝ 2,4 մլրդ դրամ, «Գազպրոմ Արմենիա»՝ 0,9 մլրդ դրամ, «Ղ-Տելեկոմ»՝ 0,6 մլրդ դրամ: Ընդ որում, սեպտեմբեր ամսվա կանխատեսումներով, այդ թիվը կավելանա՝ կազմելով գրեթե 22 մլրդ դրամ:***

### ԿԸՀ-Ն ՍԱՀՄԱՆԵՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ

***Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 7՝ կողմ, 0՝ դեմ ձայների հարաբերակցությամբ, սահմանեց 2017 թվականին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը:***

***«2017 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները կանցկացվեն փետրվարի 12-ին, հունիսի 18-ին եւ նոյեմբերի 5-ին»,- ԿԸՀ արտահերթ նիստի ժամանակ ասաց քարտուղար Արմեն Սմբատյանը:***

***ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանն էլ հավելեց, որ սահմանված բոլոր օրերը կիրակի են:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



***01.10.2016. Քրիստոսի 72 աշակերտների հիշատակության օր***

Բացի 12 առաքյալներից, Հիսուս ուներ նաեւ 72 աշակերտ, որոնց Տերն ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերին: Ցավոք, Ավետարանում նշված չեն այդ աշակերտների անունները: Ավետարաններում «աշակերտ» բառն ընդհանրապես գործածվում է Քրիստոսի բոլոր հետեւորդների համար: Հիսուս Քրիստոս իր առաքյալներին եւ աշակերտներին՝ «իբրեւ գառներ գայլերի մեջ», երկու-երկու ուղարկեց քարոզելու Աստծո Արքայությունը՝ ասելով. «Ով ձեզ լսում է, Ինձ է լսում, եւ ով ձեզ մերժում է, Ինձ է մերժում» (Ղուկաս 10:16): Առաքյալների եւ աշակերտների միջեւ գրեթե տարբերություններ չկան, նրանք ունեն նույն իշխանությունը եւ առաքելությունը (Ղուկաս 10:9, 9:1), սակայն բոլոր աշակերտների անունները, Բեթղեհեմի սուրբ մանուկների նման, միայն Աստծուն են հայտնի՝ գրված երկնքի արքայության սրբազան գրքում:

***03.10.2016. Սուրբ Փոկաս հայրապետի հիշատակության օր***

***04.10.2016. Թեկղի եւ Վարվառա Սուրբ կույսերի հիշատակության օր***

***08.10.2016. Սուրբ թարգմանիչ Վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն***

Սուրբ թարգմանիչ Վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ» եւ տոնվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի, եւ նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու ու Ներսես Կլայեցու», որը շարժական է, եւ տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչեւ նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Թարգմանիչ ընդհանուր անվան տակ հայտնի են Սուրբ Մեսրոպ Մաշտոցին եւ Սուրբ Սահակ Պարթեւին աշակերտած շուրջ հարյուր սաներ:

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

# ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏՀԱՅԴՐԱՄԱՅԻ ԹԱՏՐՈՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ԵՐԵՔ ՆԵՐԱԿԱՅԱՑՈՒՄՈՎ

*Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը հոկտեմբերի 1-4-ը հյուրախաղերով հանդես կգա Երեւանում:*



Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը մեր թերթի թղթակցի հետ զրույցում ասաց.

- Մեր թատերախումբը Երեւանի Պատանի հանդիսատեսի թատրոնում հանդես կգա երեք ներկայացումով, որոնցից մեկը ժամանակակից հայ արձակագիր եւ թատերագիր, ծնունդով Թբիլիսիի Չուղուրեթի թաղամասից Գուրգեն Խանջյանի «Անմեղսունակների պարը» ստեղծագործությունն է: Նույն ներկայացումներով կմեկնենք նաեւ Վանաձոր:

Արդեն յոթ տարի է, ինչ թատրոնի շենքը չի գործում: Վրաստանի կառավարությունը գումար է հատկացրել այն վերանորոգելու համար, թատրոնի վերանորոգման աշխատանքները կավարտվեն մեկ տարում:

Այս մի քանի տարին մենք տարբեր ներկայացումներով հանդես ենք եկել Վրաստանի հայաշատ գյուղերում, շրջաններում: Թատրոնի վերանորոգումից հետո, արդեն կսկսենք ներկայացումներ բեմադրել մեր շենքում:

ՇԱԽՄԱՏ

# ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՉԵՄՊԻՈՆ

*Եզրագիծը հատեց Վրաստանի ակումբային առաջնությունը, որին մասնակցում էին նաեւ Հայաստանի երեք ներկայացուցիչներ՝ միջազգային վարպետներ Վահե Բաղդասարյանը, Տիգրան Հարությունյանը եւ Սուսաննա Գաբոյանը:*



Ընդ որում, Վահե Բաղդասարյանը գլխավորում էր «Սամեգրելո» ակումբը, թիմի կազմում հանդես էր գալիս նաեւ Սուսաննա Գաբոյանը, իսկ Տիգրան Հարությունյանը ներկայացնում էր «Նոնա» ակումբը:

Վրաստանի ակումբային չեմպիոնի տիտղոսը նվաճեց «Նոնա» ակումբը, որը 6 հանդիպում ավարտեց հաղթանակով եւ միայն մեկ մրցախաղում ոչ-ոքի խաղաց: Թիմի հաջողությանը նպաստեց նաեւ Տիգրան Հարությունյանի վստահ ելույթը, ով 7 հնարավորից վաստակեց 6 միավոր եւ մի քանի մրցախաղերում տարավ որոշիչ հաղթանակներ:

«Սամեգրելո» ակումբը, որի կազմում հանդես էին գալիս Վահե Բաղդասարյանն ու Սուսաննա Գաբոյանը զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2016»

# ՄԱՍՆԱԿԻՑ 17 ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

*2016 թվականի «Մանկական եվրատեսիլ» երաժշտական մրցույթին մասնակցությունը, որը նոյեմբերի 20-ին կանցկացվի Մալթայում, հաստատել է 17 երկիր: Այդ մասին հայտնել է Եվրոպական հեռարձակողների միության (ԵՀՄ) մամուլի ծառայությունը:*



Մասնակիցների ցուցակում են Վրաստանը, Հայաստանը, Ռուսաստանը, Ալբանիան, Ավստրալիան, Բելառուսը, Բուլղարիան, Կիպրոսը, Իռլանդիան, Իսրայելը, Իտալիան, Մալթան, Մակեդոնիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Սերբիան եւ Ուկրաինան:

Տասը տարվա ընթացքում առաջին անգամ մրցույթին իր մասնակցության մասին հայտարարել է Լեհաստանը, իսկ չորսամյա ընդմիջումից հետո, մրցույթ է վերադառնում Իսրայելը:

Մրցույթը կանցկացվի 14-րդ անգամ եւ կազմակերպվում է ԵՀՄ-ի կողմից: 2015 թվականի «Մանկական եվրատեսիլի» արդյունքների համաձայն, որն անցկացվել էր Բուլղարիայի մայրաքաղաքում, հաղթող էր ճանաչվել մալթացի, 14-ամյա կատարող Դեստինի Չուկունիերեն:

## ԽԱՉԲԱՌ

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ■ | 1 | 2 | | 3 | | ■ | 4 | | 5 | | | 6 | | ■ |
| 7 | ■ | | ■ | | ■ | ■ | | ■ | | ■ | ■ | | ■ | ■ |
| 8 | | | | | 9 | ■ | | ■ | | ■ | 10 | | | 11 |
| | ■ | | ■ | 12 | | | | | | | ■ | | ■ | |
| | ■ | ■ | 13 | ■ | | ■ | | ■ | | ■ | 14 | | 15 | |
| 16 | 17 | | | ■ | 18 | 19 | | | | ■ | | ■ | 20 | |
| ■ | | ■ | 21 | 22 | | | ■ | ■ | ■ | 23 | | 24 | | |
| 25 | | 26 | | | ■ | 27 | 28 | | 29 | ■ | ■ | | ■ | ■ |
| | ■ | | ■ | 30 | 31 | | | ■ | | ■ | 32 | | | 33 |
| 34 | 35 | | 36 | | | ■ | 37 | | | ■ | ■ | | ■ | |
| ■ | 38 | | | | | | | ■ | 39 | | 40 | | 41 | |
| 42 | | | | ■ | | ■ | | ■ | | ■ | 43 | | | |
| ■ | | ■ | 44 | | | 45 | ■ | 46 | ■ | ■ | | ■ | | ■ |
| 47 | ■ | 48 | ■ | ■ | ■ | 49 | | | ■ | ■ | | ■ | 50 | 51 |
| | ■ | | ■ | 52 | ■ | | ■ | 53 | | | ■ | 54 | | |
| | ■ | | ■ | 55 | 56 | | ■ | | ■ | ■ | ■ | | ■ | |
| 57 | | | | | | ■ | ■ | 58 | | 59 | | | | |
| | ■ | | ■ | 60 | | | | | ■ | | ■ | | ■ | |

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Արիեստը՝ թբիլիսյան բարբառով: 4.Կղզի Վանա լճում: 8.Ոխ, քեն պահող: 10.Ա.Դյումա «... Մոնթե Քրիստո»: 12.Վերքը կապելու հարմարանք: 14.Գիքորի քույրը: 16.Հայաստանում ու Վրաստանում ապրող ազգային փոքրամասնություն: 18.Արաբական իշխանության կողմից նշանակված կուսակալ կամ կառավարիչ: 20.Ստորադասական շաղկապ: 21.Կեղտաբիծ շորի վրա: 23.Ցոփ ու ... կյանք: 25.Բռնի ուժով: 27.Շեքսպիրի հերոս: 30.Բնակավայր Վրաստանում: 32.Ատամը արեւմտահայի լեզվում: 34.Կուբայի մայրաքաղաքը: 37.... ու խոպան: 30.Վարդանի դուստր Շուշանիկի ամուսինը: 39.Իր, անշունչ գոյական: 42.Հայոց, վրաց, ռուսաց ...: 43.Սթափ, զգաստ, արթուն: 44.Քարերով զարդարված բաժակ (եկեղ.): 49.«... ու լուսին իրար փարված, դուրս են գալիս միասին» (Հովհ.Թումանյան): 50.«Ել, նորից վառիր հուրդ հարյաց» (ժող. երգ): 53.Վայրի կենդանի: 54.Խոսքի մաս: 55.... ու մուտք: 57.Ե'վ Ներսիսյանը, ե'ւ Հովհաննիսյանը: 58.Մադրասում լույս տեսած հայ առաջին պարբերականը: 60.Երիտասարդ դերասան եւ հաղորդավար ... Լեւոնյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Շաքարի հումք: 3.Ավտոմեքենայի մաս: 4.Ռուս դերասան եւ հումորիստ ... Ռայկին: 5.Ֆրանսահայ գրող Անրի ... (Լեւոն Թորոսյան): 6.Հացաբույսի տեսակ: 7....ի այբուբենը: 9.Արեւմտահայ բանաստեղծ ... Մեծարենց: 11.Օգտագործվում է բժշկության մեջ: 13.Թաղամաս Թբիլիսիում: 14.Փչեց ... քամին: 15.Տապանի տերը: 17.Անիմաստ թիվ: 19.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 22.Կանավճար՝ կատարվելիք աշխատանքի դիմաց: 24.Կարգը խանգարող, չլսող: 25.Մատաղ, նաեւ պատերազմում զոհվածը, մահացածը: 26.Ե'վ Միշվելաձեն, ե'ւ Ջափարիձեն: 28.Առանց խնայելու: 29.Գազանների խումբը: 31.... մորթի: 33.Նար-Դոսի հերոսուհի: 35.Ե'վ Բարսեղյան, ե'ւ Ավետիսյան: 36.Անվանի դերասանուհի ... Ոսկանյան: 40.Վիրահայ լուսանկարիչ ... Մանուկյան: 41.Ասիական պետություն: 45.Հայկ Նահապետի դաստակերտը: 46.Քաղաք Հայաստանում: 47.Կատաղի, չսանձվող: 48.Դ.Դեմիրճյանի հերոս՝ ... Մոկաց: 51.Ստոր, անարգ, ցինիկ: 52.Մզկիթի սպասավոր: 54.Ախալցիխեում ծնված, հանրահայտ դերասան ... Խաչվանքյան: 56.Ժողովրդական երգ՝ «Քելե, ...: 59.Անձնական դերանուն:

**Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ**

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Նվաստ: 8.Նորմա: 10.Տանձ: 11.Վաղ: 13.Կոտակ: 14.Ալաբամա: 16.Պնակ: 17.Ճոն: 18.Լիլիթ: 20.Խաթա: 21.Այն: 22.Խտիտ: 26.Ասիա: 28.Տաքսի: 31.Նար: 32.Կոտ: 34.Քսան: 35.Աբեղա: 36.Գիքո: 38.Օրի: 41.Միշտ: 43.Գիսանե: 45.Չաչա: 48.Նոյ: 49.Լավա: 52.Կուլա: 53.Դաս: 54.Դար: 55.Արիա: 56.Զոն: 57.Կակա: 58.Կվա: 59.Մեծ: 60.Թիմ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Եվդոկիա: 2.Վտակ: 3.Հնձան: 4.Սրվակ: 5.Դավաճան: 7.Ստալին: 9.Եղանակ: 12.Ամոթ: 15.Լարիսա: 19.Լյուքս: 23.Տանգո: 24.Տիրան: 25.Գինի: 27.Փող: 29.Աքար: 30.Սագ: 32.Կեպի: 33.Տաշտ: 37.Քուին: 39.Ինչուիկ: 40.Գայանե: 41.Մել: 42.Շիվակի: 44.Սոդոմ: 46.Ակր: 47.Ալավ: 50.Ադաթ: 51.Արամ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445